— Մինչեւ դուք մի անգամ եւս նարգիլէ կը ծխէք, թուղթը պատրաստ կը լինի:

Քարտուղարը հարկաւոր պատոերը ստանալուց յետոյ գլուխ տոեց եւ հեռացաւ: Ասլանը դարձեալ շարունակեց խօսել բժշկութեան վրայ:

— Եւրոպան, արեւելքից սովորելով բժշկութիւնը, սկսեց բոլորովին մոռանալ իր վարժապետին: Յառաջադէմ աշակերտը, իրաւ է, կարող է աւելի զարգանալ եւ իր սովորածը աւելի կատարելագործել, բայց հին վարժապետի մօտ դարձեալ շատ բան մնում է: Ես, օրինակ, հիացած եմ հայոց ժողովրդական բժշկութեամբ: Ճանապարհորդութեանս ժամանակը ըստ մեծի մասին խոյս էի տալիս քաղաքներից, անցնում էի հայոց գիւղերով, ժողովրդի բժշկութեան եղանակները ուսումնասիրելու համար: Ինձ յաջողեց մի քանի նշանաւոր գիւտեր անել, որ մեր բժշկութեան մէջ բոլորովին անծանօթ են:

Ասլանը սուտ չէր խօսում. նա, իրաւ, հետաքրքրւում էր ժողովրդական բժշկութեամբ եւ նրա գրքերով, բայց այդ չէր նրա ճանապարհորդութեան իսկական նպատակը: Հանգամանքներից օգուտ քաղելու զարմանալի ընդունակութիւն ունէր այդ մարդը, եւ աւելի զարմանալի էր նրա մէջ այն ճարպկութիւնը, որ իր ցանկացած նպատակը հէնց իր հակառակորդի ձեռքով կատարել կը տար: Օրինակ, նա պէտք է գնար Վարագայ վանքը, եւ ինձ լաւ յայտնի էր, թէ ինչ նպատակով: Նրա այցելութիւնը այդ վանքին՝ կարող էր մեծ կասկած յարուցանել սրբազանի սրտում, որովհետեւ, ինչպէս յետոյ կը տեսնենք, նա Վարագայ վրայ շատ վատ աչքով էր նայում: Այժմ Ասլանը այնպէս պտտացրեց գործը, որ ինքը սրբազանը նրան թուղթ տոեց Վարագ գնալու, թէեւ ես հաւատացած էի, որ Վարագայ գրադարանը նրան շատ չէր հետաքրքրում:

— Ես կը ցանկանայի տեսնել նաեւ մի տեսակ աղ, որ պատրաստւում է Վանում, — ասաց նա:

— Այդ աղը պատրաստւում է Աւան գիւղում, — պատասխանեց սրբազանը, — այստեղից շատ հեռու չէ գիւղը, ընդամէնը մի քանի ժամոայ ճանապարհ է: Պատրաստում են ծովի ջրից, «բորակէ է կոչւում, այստեղ գործ են ածում լոացքի մէջ, մաքրելու զարմանալի զօրութիւն ունի:

— Նա բորակ չէ, — ասաց Ասլանը, — անկասկած մի այլ բաղադրութիւն պէտք է լինի: Եթէ իմ կարծած աղից լինի, որի մէջ տարակոյս չունեմ, կարելի է յուսալ, որ այդ աղը ժամանակով կը դառնայ վանեցոց հարստութեան գլխաւոր աղբիւրներից մէկը: